ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-822-23.12.2020-ՏՏԳԲ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-221-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը «տեղական վճարի» բառերից հետո լրացնել՝ «ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը «պատասխանատվությունը» բառից հետո լրացնել «ինչպես նաեւ վարչական վարույթի առանձնահատկությունները» բառերով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ավտոկայանատեղիում կայանելու դեպքում ավտոկայանատեղի վճար վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը:»:

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասում «դրույքաչափը» բառից հետո լրացնել

« եթե օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:» բառերը:

2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4.Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը սահմանում են ըստ կայանատեղի, Երեւան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների, այդ թվում՝ վարչական շրջաններում նաեւ գոտիավորման սկզբունքով, ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, ըստ վերջինով իրականացվող գործունեության բնույթի, ըստ օրերի եւ օրվա ժամերի, ըստ շաբաթների, ամիսների եւ տարվա: Ընդ որում, համայնքի ավագանին կարող է սահմանել կանխավճարային կտրոնային համակարգ:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «100000» թիվը փոխարինել «300000» բառով:

Հոդված 6. Օրենքը լրացնել նոր՝ 16.1. հոդվածով.

«Հոդված 16.1. էլեկտրոնային համակարգերով և տեխնիկական միջոցներով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները»

1. էլեկտրոնային համակարգերով և տեխնիկական միջոցներով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 16.2.-16.4.-րդ հոդվածներով:»:

2. Անմիջականորեն իրականացվող հսկողության միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթն իրականացվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» սահմանված կարգով:

3. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար վարչական պատասխանատվության միջոցի կիրառում նախատեսող վարչական ակտի հասցեատեր են համարվում ավտոտրասպորտային միջոցի ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսանալու դեպքում՝ տվյալ ֆիզիկական անձը, իսկ եթե ավտոտրասպորտային միջոցը իրավաբանական անձի, պետական (պետական մարմին,պետական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային հիմնարկ, համայնքային կառավարչական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպության սեփականություն է (պետական, համայնքային կազմակերպությունների մասով ամրակցված է),՝ ապա այն անձը, որը իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի հաշվառում իրականացնող մարմնում խախտման կատարման պահին գրանցված է համապատասխանաբար տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավար կամ աշխատակազմի ղեկավար (քարտուղար):

4. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար օրենքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը որպես վարչական մարմին կիրառում է համայնքի ղեկավարը, իսկ Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:

5. Եթե սույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները ուղղակիորեն չեն կարգավորվում սույն օրենքով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:»:

Հոդված 7. Օրենքը լրացնել նոր՝ 16.2., 16.3., 16.4., 16.5., 16.6. հոդվածներով.

«Հոդված 16.2.Ապացույցները եւ վարչական վարույթի փուլերը

1. Սույն օրենքով ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի պարզման փուլում ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի ապացույցները ավտոկայանատեղիում տրանսպորտային միջոցի կայանումը ամրագրած տեսանյութն է եւ տվյալ տրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալները:

2. Վարչական վարույթը բաղկացած է ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի պարզման եւ վարչական ակտի ընդունման փուլերից:

Հոդված 16.3. Ավտոկայանատեղի վճար չվճարելու փաստի պարզումը

1. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի պարզումը վարչական մարմնի կողմից ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցի կայանումը ամրագրած տեսանյութի համադրումն է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալների հետ կայանման օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:

2. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստը համարվում է պարզված, եթե էլեկտրոնային համակարգերով և տեխնիկական միջոցներով ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցի կայանումը արմագրած տեսանյութը տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալների հետ համադրելու արդյունքում պարզ է դառնում, որ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա դրությամբ չի վճարվել սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում:

4. Եթե սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստը արձանագրվել է իրավաբանական անձի, պետական կամ համայնքային կազմակերպության սեփականություն հանդիսացող (պետական, համայնքային կազմակերպությունների մասով ամրակցված) ավտոտրանսպորտային միջոցի մասով, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը, ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստը պարզելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի հաշվառում իրականացնող մարմնից պարզում է խախտման կատարման պահին տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավար (աշխատակազմի ղեկավար, քարտուղար) հանդիսանալու փաստը:

Հոդված 16.4. Վարչական ակտն ընդունելու, վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելու, վարչական ակտի կատարման ժամկետները

1. Վարչական վարույթ իրականացնող մարմինը վարչական ակտը պարտավոր է ընդունել սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի պարզելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն օրենքի 16.2 հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում վարչական ակտի հասցեատիրոջը պարզելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Վարչական ակտն ընդունելուց հետո՝ այն երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է վարչական ակտի հասցեատիրոջը:

Հոդված 16.5. Վարչական ակտի առանձնահատկությունները

1. Վարչական ակտը ներառում է՝

1) Իրավախախտման տեղը, ժամը

2) գանձապետական հաշվեհամարը՝ նշանակված տուգանքը վճարելու համար
3) լուսանկարը

4) օրենքով սահմանված այլ տվյալներ

2. Վարչական ակտի ձեւը եւ նմուշը սահմանվում են վարչական մարմնի ղեկավարի որոշմամբ:

Հոդված 16.6. Իրավախախտումների վերաբերյալ փաստական տվյալների փոխանցումը համայնքների եւ պետական մարմինների միջեվ

«1. Ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերով և տեխնիկական միջոցներով արձանագրված տվյալները (լուսանկար, տեսանյութ եւ այլն) կարող են փոխանցվել պետական (վարչական) այլ մարմինների՝ վերջիններիս կողմից օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման շրջանակում:

2. Համայնքները սույն հոդվածի 1-ին մասում նշված պետական (վարչական) մարմիններին կարող են տրամադրել նաեւ հասանելիություն ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ էլեկտրոնային համակարգերին և տեխնիկական միջոցներին (լուսանկարող, տեսանկարահանող, ձայնաազդանշանային համակարգեր եւ այլն)՝ այլ օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների խախտումների համար նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:»:

Հոդված 8. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1. մասով.

«1.1. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում առանց հաշվառման համարանիշի կամ հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակված վիճակում կայանելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն եւ ենթակա է հատուկ տարածք տեղափոխման:»:

Հոդված 9. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ

ՓՈՓՈԽՎՈՂ ԵՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ»
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-221-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը «տեղական վճարի» բառերից հետո լրացնել ~~հետեւյալ բառերով.~~

«ԵՎ ~~ԱՅԴ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ~~ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածի 1-ին մասը «պատասխանատվությունը» բառից հետո լրացնել «ինչպես նաեւ ~~այդ գործերով իրականացվող~~ վարչական վարույթի առանձնահատկությունները» բառերով:

Հոդված 3. Օրենքի 4-րդ հոդվածի~~ը~~ 1-ին և 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«1. Ավտոտրանսպորտային միջոցը~~ց~~ կամ դրա կցորդը ավտոկայանատեղիում կայանելու դեպքում ավտոկայանատեղի վճար վճարող է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը:~~, իսկ եթե ավտոտրանսպորտային միջոցը պետական (պետական մարմին, պետական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային հիմնարկ, համայնքային կառավարչական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպության սեփականություն է (ամրակցված է),՝ ապա համապատասխան պետական կամ համայնքային կազմակերպությունը:»:~~

Հոդված 4. Օրենքի 9-րդ հոդվածում՝

1. 3-րդ մասում «դրույքաչափը» բառից հետո լրացնել ~~հետեւյալ բառերը.~~

«եթե օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:» բառերը: ~~բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ձեռնակատիրական գործունեության մեջ օգտագործելու եւ այդ գործունեությամբ պայմանավորված ավտոկայանատեղիում կայանման դեպքերի, երբ ավտոկայանատեղի վճարը համայնքի ավագանու որոշմամբ կարող է սահմանվել այլ դրույքաչափերով:~~

~~Ավտորանսպորտային միջոցը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու եւ այդ գործունեությամբ պայմանավորված ավտոկայանատեղիում կայանման փաստը կարող է հիմնավորվել ավտոկայանատեղում կայանման, ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ համայնքի կողմից անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի (նկարահանող, տեսանակարահանող, ձայնաազդանշանային համակարգերի, սարքերի եւ այլն) կողմից իրականացված հսկողության արդյունքում հավաքագրված փաստական տվյալների հիման վրա:»:~~

2. 4-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«4,Ավտոկայանատեղի վճարների դրույքաչափերը սահմանվում են ~~կարող են սահմանվել~~ ըստ կայանատեղի, Երեւան քաղաքում՝ ըստ վարչական շրջանների, այդ թվում՝ վարչական շրջաններում նաեւ գոտիավորման սկզբունքով, ըստ տրանսպորտային միջոցի տեսակի, ըստ վերջինով իրականացվող գործունեության բնույթի, ըստ օրերի եւ օրվա ժամերի, ըստ շաբաթների, ամիսների եւ տարվա: Ընդ որում, համայնքի ավագանին կարող է սահմանել կանխավճարային կտրոնային համակարգ:»:

Հոդված 5. Օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետում «100000» թիվը փոխարինել «300000» բառով:

~~***Հոդված 6.*** Օրենքի 14-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~1. Իրենց պարտականություններն իրականացնելու ժամանակ ավտոկայանատեղի վճարից ազատված են շտապ բժշկական օգնության ծառայությունը, ոստիկանությունը, արտակարգ իրավիճակների նախարարությունը, պաշտպանության նախարարությունը եւ ազգային անվտանգության ծառայությունը:~~

Հոդված 6~~7~~. Օրենքը լրացնել նոր՝ 16.1. հոդվածով.

«Հոդված 16.1. էլեկտրոնային համակարգերովի և տեխնիկական միջոցներով ~~միջոցով~~ հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները»

1. էլեկտրոնային համակարգերովի և տեխնիկական միջոցներով ~~միջոցով~~ հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքի 16.2.-16.4.-րդ հոդվածներով:»:

2. Անմիջականորեն իրականացվող հսկողության միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ գործերով վարչական վարույթն իրականացվում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքով» սահմանված կարգով:

3. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար վարչական պատասխանատվության միջոցի կիրառում նախատեսող վարչական ակտի հասցեատեր են համարվում ավտոտրասպորտային միջոցի ֆիզիկական անձի սեփականությունը հանդիսանալու դեպքում՝ տվյալ ֆիզիկական անձը, իսկ եթե ավտոտրասպորտային միջոցը իրավաբանական անձի, պետական (պետական մարմին,պետական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային հիմնարկ, համայնքային կառավարչական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպության սեփականություն է (պետական, համայնքային կազմակերպությունների մասով ամրակցված է),՝ ապա այն անձը, որը իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի հաշվառում իրականացնող մարմնում խախտման կատարման պահին գրանցված է համապատասխանաբար տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավար կամ աշխատակազմի ղեկավար (քարտուղար):

4. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու համար օրենքով նախատեսված վարչական պատասխանատվության միջոցը որպես վարչական մարմին կիրառում է համայնքի ղեկավարը, իսկ Երեւան քաղաքում՝ Երեւանի քաղաքապետը կամ նրա որոշմամբ սահմանված պաշտոնատար անձինք:

5. Եթե սույն օրենքի կիրառման ընթացքում ծագող հարաբերությունները ուղղակիորեն չեն կարգավորվում սույն օրենքով, ապա այդպիսի հարաբերությունների նկատմամբ կիրառվում են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի եւ «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» օրենքի դրույթները:»:

Հոդված 7~~8~~. Օրենքը լրացնել նոր՝ 16.2., 16.3., 16.4., 16.5., 16.6. հոդվածներով.

«Հոդված 16.2.Ապացույցները եւ վարչական վարույթի փուլերը

1. Սույն օրենքով ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի ~~վարչական վարույթի~~ պարզման փուլում ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի ապացույցները ավտոկայանատեղիում տրանսպորտային միջոցի կայանումը ամրագրած տեսանյութն~~ը եւ (կամ) լուսանկարն~~ է եւ տվյալ տրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալները:

2. Վարչական վարույթը բաղկացած է ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի պարզման եւ վարչական ակտի ընդունման փուլերից:

Հոդված 16.3. Ավտոկայանատեղի վճար չվճարելու փաստի պարզումը

1. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի պարզումը վարչական մարմնի կողմից ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցի կայանումը ամրագրած տեսանյութի ~~եւ (կամ) լուսանկարի, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում նաեւ դրանց համակցության,~~ համադրումն է տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալների հետ կայանման օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում: ~~:~~

2. Սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստը համարվում է պարզված, եթե էլեկտրոնային համակարգերով~~ի~~ և տեխնիկական միջոցներով ~~միջոցով~~ ավտոկայանատեղիում ավտոտրանսպորտային միջոցի կայանումը ամրագրած տեսանյութը ~~եւ (կամ) լուսանկարը~~ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա, ժամի դրությամբ գանձապետական հաշվի դրամական մուտքերի առկա տվյալների հետ համադրելու արդյունքում պարզ է դառնում ~~կասկած չի հարուցում այն հանգամանքը~~, որ տվյալ ավտոտրանսպորտային միջոցի մասով կայանման օրվա դրությամբ չի վճարվել սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվում:

4. Եթե սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստը արձանագրվել է իրավաբանական անձի, պետական կամ համայնքային կազմակերպության սեփականություն հանդիսացող (պետական, համայնքային կազմակերպությունների մասով ամրակցված) ավտոտրանսպորտային միջոցի մասով, ապա վարչական ակտի հասցեատիրոջը պարզելու նպատակով վարչական մարմինը, ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստը պարզելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում

իրավաբանական անձանց պետական գրանցում, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների եւ անհատ ձեռնարկատերերի հաշվառում իրականացնող մարմնից պարզում է խախտման կատարման պահին տվյալ իրավաբանական անձի գործադիր մարմնի ղեկավար, պետական կամ համայնքային կազմակերպության ղեկավար (աշխատակազմի ղեկավար, քարտուղար) հանդիսանալու փաստը:

Հոդված 16.4. Վարչական ակտն ընդունելու, վարչական ակտը հասցեատիրոջը հանձնելու, վարչական ակտի կատարման ժամկետները

1. Վարչական վարույթ իրականացնող մարմինը վարչական ակտը պարտավոր է ընդունել սույն օրենքով նախատեսված ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի պարզելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ սույն օրենքի 16.2 հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում վարչական ակտի հասցեատիրոջը պարզելուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում:

2. Վարչական ակտն ընդունելուց հետո՝ այն երեք աշխատանքային օրվա ընթացքում ուղարկվում է վարչական ակտի հասցեատիրոջը:

Հոդված 16.5. Վարչական ակտի առանձնահատկությունները

1. Վարչական ակտը ներառում է՝

1) Իրավախախտման տեղը, ժամը

2) գանձապետական հաշվեհամարը՝ նշանակված տուգանքը վճարելու համար
3) լուսանկարը

4) օրենքով սահմանված այլ տվյալներ

2. Վարչական ակտի ձեւը եւ նմուշը սահմանվում են վարչական մարմնի ղեկավարի ~~հրամանով (~~որոշմամբ~~)~~:

Հոդված 16.6. Իրավախախտումների վերաբերյալ փաստական տվյալների փոխանցումը ~~շրջանառությունը~~ համայնքների եւ պետական մարմինների միջև

«1. Ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերով և տեխնիկական միջոցներով արձանագրված տվյալները (լուսանկար, տեսանյութ եւ այլն) կարող են փոխանցվել պետական (վարչական) այլ մարմինների՝ վերջիններիս կողմից օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման շրջանակում:

~~Ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ անմիջականորեն կամ էլեկտրոնային (լուսանկարող, տեսանկարահանող, ձայնաձայնանշանային համակարգեր եւ այլն) համակարգերի միջոցով հսկողություն իրականացնելու ընթացքում այլ օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների խախտումների հատկանիշներ հայտնաբերելիս համայնքները համապատասխան փաստական տվյալները փոխանցում են այն պետական (վարչական) մարմիններին, որոնք~~

~~օրենսդրությամբ լիազորված են կիրառելու տվյալ իրավախախտման համար նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ:~~

2. Համայնքները սույն հոդվածի 1-ին մասում նշված պետական (վարչական) մարմիններին կարող են տրամադրել նաեւ հասանելիություն ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ էլեկտրոնային համակարգերին և տեխնիկական միջոցներին (լուսանկարող, տեսանկարահանող, ձայնաազդանշանային համակարգեր եւ այլն) ~~համակարգերին~~՝ այլ օրենքների, այլ իրավական ակտերի պահանջների խախտումների համար նախատեսված վարչական պատասխանատվության միջոցներ կիրառելու նպատակով:»:

Հոդված 8~~9~~. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1. մասով.

«1.1. Ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը համայնքային վճարովի ավտոկայանատեղում առանց հաշվառման համարանիշի կամ հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակված վիճակում կայանելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն ~~արգելվում է~~ եւ ենթակա է հատուկ տարածք տեղափոխման:»:

Հոդված 9~~10~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ներկայացված գրավոր առաջարկների

ՀՀ ՕՐԵՆՔԸ «ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԱՅԱՆԱՏԵՂԵՐԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (Պ-822-23.12.2020-ՏՏԳԲ-011/1)				
Առաջարկության հեղինակը	Նախագծի այն մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը	Առաջարկն ընդունելու կամ մերժելով վերաբերյալ հիմնական զեկուցողի եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելեւ վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5
ՀՀ Աժ պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Նախագծի 3-րդ հոդված	«Սեփականատերը» բառից հետո «,իսկ եթե ավտոտրասպորտային միջոցը պետական (պետական մարմին, պետական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող պետական կազմակերպություն) կամ համայնքային (համայնքային հիմնարկ, համայնքային կառավարչական հիմնարկ կամ որեւէ այլ կարգավիճակ ունեցող համայնքային կազմակերպություն) կազմակերպության սեփականություն է (ամրակցված է),՝ ապա համապատասխան	Ընդունվել է:	Ընդունվել է:

		պետական կամ համայնքային կազմակերպությունը» կետադրական նշանները և բառերը հանել:		
ՀՀ Աժ պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասում «դրույքաչափերով» բառից հետո լրացնել «,եթե օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ» կետադրական նշանը և բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Նիկոլայ Բաղդասարյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Սույն հոդվածով նախատեսված գոտիավորումը սահմանվում է տարբեր գույների գծանշումով:»:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում «վերնագիրը «տեղական վճարի» բառերից հետո լրացնել հետևյալ բառերով. «ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»:» բառերն անհրաժեշտ է փոխարինել «վերնագիրը «տեղական վճարի» բառերից հետո լրացնել «ԵՎ ԱՅԴ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» բառերով» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածով նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 4-րդ հոդվածում «Ավտոտրանսպորտային միջոցը»	Ընդունվել է:	Ընդունվել է:

		բառերից հետո լրացել «կամ դրա կցորդը» բառերը:		
ՀՀ կառավարություն	Նախագծի 3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածում «Օրենքի 4-րդ հոդվածը շարադրել նոր խմբագրությամբ» բառերը փոխարինել «Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասով նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասի բովանդակությունից առաջ լրացնել «4.» թիվը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասից հանել «հետևյալ» բառը, իսկ «բառերը» բառը նախատեսել «բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու և այդ գործունեությամբ պայմանավորված ավտոկայանատեղիում կայանման դեպքերի, երբ ավտոկայանատեղի վճարը համայնքի ավագանու որոշմամբ կարող է սահմանվել այլ դրույքաչափերով: Ավտոտրանսպորտային միջոցը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու և այդ գործունեությամբ պայմանավորված	Չի ընդունվել:	Չի ընդունվել:

		ավտոկայանատեղիում կայանման փաստը կարող է հիմնավորվել ավտոկայանատեղում կայանման, ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ համայնքի կողմից անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի (նկարահանող, տեսանակարահանող, ձայնաազդանշանային համակարգերի, սարքերի և այլն) կողմից իրականացված հսկողության արդյունքում հավաքագրված փաստական տվյալների հիման վրա:» բառերից հետո:		
ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 1-ին մասում «կարող է սահմանվել» բառերը փոխարինել «սահմանվում են» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում հստակեցնել «ձեռնարկատիրական գործունեություն» եզրույթը՝ տարընթերցումից խուսափելու նպատակով, ինչպես նաև 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դրույքաչափերը սահմանել օրենքով:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
ՀՀ կառավարություն	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսել՝ որ մարմնի կողմից է սահմանվելու Երևան քաղաքի վարչական շրջանների սույն օրենքով նախատեսվող գոտիականությունը:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:

ՀՀ կառավարություն	ՀՀ կառավարություն	Նախագծի 6-րդ հոդվածը հանել: Մյուս հոդվածների համարակալումները համապատասխանաբար փոխել:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող «Հոդված 16.2. 1-ին մասից, Հոդված 16.3. 1-ին և 2-րդ մասերից հանել «եւ (կամ) լուսանկարն» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող «Հոդված 16.2. 1-ին մասում «վարչական վարույթի» բառերը փոխարինել «ավտոկայանատեղի վճարը չվճարելու փաստի» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող Հոդված 16.3. 1-ին մասում «առկա տվյալների հետ» բառերից հետո լրացնել «կայանման օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում:» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 16.3 հոդվածի 2-րդ մասում «կասկած չի հարուցում այն հանգամանքը» բառերը փոխարինել «պարզ է դառնում» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդված լրացվող 16.4-րդ հոդվածի 2-րդ մասում նշել, թե վարչական ակտն ընդունելուց հետո ինչ եղանակով է ուղարկվում վարչական ակտի հասցեատիրոջը:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 16.5-րդ հոդվածի 2-րդ մասից հանել «հրամանով» բառը և «որոշմամբ» բառի փակագծերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:

ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 16.6-րդ հոդվածի վերնագրում «շրջանառություն» բառը փոխարինել «փոխանցումը» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 16.6-րդ հոդվածում «օրենսդրությամբ» բառը փոխարինել «օրենքով» բառով:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
ՀՀ կառավարություն	Նախագծի 7-րդ, 8-րդ հոդվածներ	Նախագծի 7-րդ և 8-րդ հոդվածներում «էլեկտրոնային համակարգեր» բառերի փոխարեն կիրառել «էլեկտրոնային համակարգեր և տեխնիկական միջոցներ» բառերը՝ համապատասխան հոլովաձևերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին և 2-րդ հոդված	Նախագծի 1-ին և 2-րդ հոդվածներում հանել «ԱՅԴ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 4-րդ հոդված	Նախագծի 4-րդ հոդվածում «բացառությամբ ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա կցորդը ձեռնարկատիրական գործունեության մեջ օգտագործելու եւ այդ գործունեությամբ պայմանավորված ավտոկայանատեղիում կայանման դեպքերի, երբ ավտոկայանատեղի վճարը համայնքի ավագանու որոշմամբ կարող է սահմանվել այլ դրույքաչափերով: Ավտոտրանսպորտային միջոցը ձեռնարկատիրական	Ընդունվել է:	Ընդունվել է:

		գործունեության մեջ օգտագործելու եւ այդ գործունեությամբ պայմանավորված ավտոկայանատեղիում կայանման փաստը կարող է հիմնավորվել ավտոկայանատեղում կայանման, ավտոկայանատեղի վճարի վճարման նկատմամբ համայնքի կողմից անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերի (նկարահանող, տեսանկարահանող, ձայնաազդանշանային համակարգերի, սարքերի եւ այլն) կողմից իրականացված հսկողության արդյունքում հավաքագրված փաստական տվյալների հիման վրա:» բառերը փոխարինել «եթե օրենքով այլ կարգավորում նախատեսված չէ:» բառերով:		
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 7-րդ հոդված	Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 16.3. հոդվածի 1-ին մասիվ հանել « եւ (կամ) լուսանկարի, այդ թվում՝ անհրաժեշտության դեպքում նաեւ դրանց համակցության,» բառերը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 8-րդ հոդված	Նախագծի 8-րդ հոդվածով լրացվող 16.6. հոդվածի 1-ին մասը շարադրել նոր խմբագրությամբ. «Ավտոկայանատեղի վճարի վճարման, ավտոկայանատեղիում կայանման նկատմամբ անմիջականորեն կամ էլեկտրոնային համակարգերով և	Ընդունվել է:	Ընդունվել է:

		տեխնիկական միջոցներով արձանագրված տվյալները (լուսանկար, տեսանյութ եւ այլն) կարող են փոխանցվել պետական (վարչական) այլ մարմինների՝ վերջիններիս կողմից օրենքով նախատեսված լիազորությունների իրականացման շրջանակում:»:		
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 9-րդ հոդված	Նախագծի 9-րդ հոդվածում «արգելվում է» բառը փոխարինել «առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ ՕՐԵՆՔԸ **ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ** (Պ-822[1]-23.12.2020-ՏՏԳԲ-011/1)				
ՀՀ կառավարություն	Նախագծի վերնագիր	Նախագծի վերնագրում «փոփոխություններ եվ լրացումներ» բառերը փոխարինել «փոփոխություն եվ լրացում» բառով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
ՀՀ կառավարություն	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասում «պարբերությունով» բառն փոխարինել «մասով» բառով:	Չի ընդունվել:	Չի ընդունվել:
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածում ավելացնել նոր՝ 1.1. մաս.«վերնագրում և 1-ին հոդվածում «չվճարելը» բառից հետո լրացնել «կամ առանց	Ընդունվել է:	Ընդունվել է:

		հաշվառման համարանիշի կամ հաշվառման համարանիշի առնվազն մեկ նիշը փակված վիճակում կայանելը՝» բառերը:		
ՀՀ Աժ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Նախագծի 1-ին հոդված	Նախագծի 1-ին հոդվածի 2-րդ մասը հանել:	Ընդունվել է:	Ընդունվել է: